Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-975[3]-01.04.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-247 օրենքի 10-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով.
«3. Տեսչական մարմինների կառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
	ՀՀ կառավարություն	1. Իրավական որոշակիությունից ելնելով տեսչական մարմնի կառավարման խորհրդին վերապահել տեսչական մարմնի հաստիքացուցակին, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը հավանություն տալու լիազորություն: Մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ և 6.2-րդ կետերով. «6.1) հավանություն է տալիս տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին. 6.2) հավանություն է տալիս տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը.»: Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետը «ներկայացնում» բառից հետո լրացնել «Խորհրդի հավանությանն արժանացած» բառերով:	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում

		2. Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու դրույթը հստակեցնելու և տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվել է Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը հայեցողական պաշտոն է: Հայաստանի Հանրապետության վարչապետը Խորհրդի ներկայացմամբ պաշտոնի է նշանակում Տեսչական մարմնի ղեկավարին և նրա նկատմամբ կիրառում է խրախուսման և պատասխանատվության միջոցներ: Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը»:	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում
		3. Առաջարկում ենք «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանել տեսչական մարմնի պաշտոնատար անձանց՝ տեսչական մարմնի ղեկավար և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:	Ընդունվել է	Ներկայացվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ
		4. Առաջարկում ենք «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում նախատեսել տեսչական մարմինների կառավարման	Ընդունվել է	Ներկայացվել է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ

		առանձահատկությունները ամրագրող դրույթ:		կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ
«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
	ՀՀ կառավարություն	1. Տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած հաստիքացուցակը լիազոր մարմնի ղեկավարի կողմից անփոփոխ հաստատման նպատակով Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ. «Այն դեպքում, երբ համապատասխան մարմնի կազմում գործում է օրենքով սահմանված կարգով ստեղծված տեսչական մարմին, ապա տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած հաստիքացուցակը ներառվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակում:»:	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում
		2. Օրենքի 15-րդ և 20-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հստակեցնել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	Ընդունվել է	Հոդվածները վերախմբագրվել են
		3. Գործող օրենքի 4-րդ հոդվածի գ) ենթակետում տրված սահմանումը արդեն իսկ բավարար է օրենքի գործողությունը տեսչական մարմիններում ևս տարածելու համար, քանի որ տեսչական մարմինը հանդիսանում է գործադիր մարմնի առանձնացված ստորաբաժանում:	Ընդունվել է	Հոդվածը հանվել է

		Առաջարկում ենք Օրենքի 4-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը հանել:		